

Յուսանք՝ մանաւանդ փափաքինք որ մեր ազնիւ բարեկամը հայրենեաց օղը ծծելով իւր սուաշին առողջութիւնը շուտ կը գտնէ եւ կը դառնայ նորէն ի Փարիզ, ուր կը սպասէ իւր վկայագիրը :

ՄԱՂՁԱԽՏ, ՄԱՐԱԽ ԵՒ ԳԵՏՆԱՇԱՐԺ

Յունիս եւ Յուլիս ամիսներուն մէջ մաղձախտը եզիպտոս, Սպանիա, Իտալիա, Լեհաստան, Բուժիլի, Մոլտաւիա, Պեսարապիա եւ ուրիշ քանի մը տեղուանք շատ կոտորած ըրաւ :

Մարախը (չեքիրկէ) Պեսարապիոյ եւ հարաւային Ռուսաստանի ուրիշ մէկ երկու գաւառներուն մէջ սոսկալի վնաս ըրաւ, ու թէ բնակեաց եւ թէ պատերազմի բանակներուն համար պատրաստուած ցորենները կերաւ լափեց :

Եթէ այս 1855 տարին գետնաշարժի կողմանէ ինչպէս որ սկսաւ ու շարունակեց՝ անանկ լմննայ, այնպիսի տարի մը պիտի ըլլայ որ նմանը պատահած գտնելու համար ասկէց ճիշդ հարիւր տարի ետ դառնալու է : Փորրուզալի մայրաքաղաքը Լիսպոնա 1755ին գետնաշարժէ տակնուվրայ եղաւ . 24 հազար հոգի աւերակներուն տակը մեռան, եւ 17 հազար տուն կործանեցաւ : Այն գետնաշարժը նոյեմբեր ամսոյն առաջին օրը պատահեցաւ . բայց անկէց առաջ՝ յունիսի 7ին Պարսկաստանի Քաշան քաղաքին կործանումը հանդիպել էր, որով 600 տուն փչաւ, ու 1200 հոգի վրատակներուն մէջ մնացին : Անկէց ետքը տասը ամիս ժամանակ միակերպ սասանութիւններ եղան . Մաղըբալի մէջ Մերաքէշ (Մարոք) քաղաքին քով գետինը պատռեցաւ, ու Արարացի ամբողջ ժողովուրդ մը անասուններովը հանդերձ գետինն տակը անցաւ կրսն : Միայն Ափրիկէի մէջ այն տարին նոյեմբեր ամսոյն 1ին ու 18ին շարժերէն 600 հազար հոգի մեռել են : — Թեպետ եւ այս մեր 1855 տարին ալ բուսահամարովն ու շարժերովը նման կերեւնայ 1755ին, սակայն պէտք է փառք տանք աստուածային ողորմութեան որ այս տարուան բնական սասանութիւններէն այն տարւոյն սարսափելի կործանումները չպատճառեցան, եւ փափաքինք ու մաղբենք որ բարոյական ու կամաւոր սասանումներն ալ միանգամայն պակասին աշխարհիս երեսն :

Այս տարւոյս գետնաշարժները կրնանք սկսած սեպտեմբերէն տարւոյն դեկտեմբերի 28ին զիշերը, յորում Գաղղիոյ հարաւային կողմերն ու Փիեմոնթի քանի մը տեղուանքը դողացին, թեպետ եւ մարդ-

կանց կենացը վնաս չեղաւ : Բայց տարւոյս Լիսպոնան եղաւ գեղեցկանիստ ու դժբաղդ Պրուսա քաղաքը՝ ապրիլի 10ին սոսկալի զիշերը, յորում 150 անգամ գետինը դողաց, քարաշէն տները փլան, անազին ժայռերը լեռներէն փրքելով՝ քաղաքին վրայ քաւայեցան . խաներ, մզկիթներ, կամուրջներ կործանեցան, կրակն ալ չորս դին առած՝ փայտէ շէնքերը լափեց մոխիր դարձուց : Իսկ մեռնող մարդկանց ճիշդ համարանքը դեռ չէ գիտցուած :

Պրուսայի գետնաշարժին ուժովը դող եղաւ նաեւ բոլոր Փոքր Ասիան ու Եւրոպայի արեւելեան ծովագերքը : Այն բաւական չէր . յուլիսի 25ին կեսօրէն մէկ ժամու չափ ետքը մեծ սասանութիւն մը եղաւ Գաղղիոյ արեւելեան կողմերը, Փիեմոնթի երկիրը, Զուիցերիի մէջ եւ բոլոր հարաւային Գերմանիա : Տեղ տեղ մինչեւ 15 սասանութիւն համբեր են : Եւ սակայն այս շարժերուն վնասները այնչափ սաստիկ չեն եղած՝ որչափ որ կրնար վախցուիլ : Զարմանալին այս է որ ինչպէս 1755ին, այսպէս ալ 1855ին գետնաշարժին հետ մեկտեղ սկսաւ նաեւ Վեսուվ հրաբուխը բոռնկիլ ու գրեթէ բոլոր մայիս ամսոյն մէջ լաւա ժայքքեց :

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ՄԱՍՆԱՅ ԱՂԱԿՆՈՑ :

— Առ. Պ. Բ. եւ Է. Ի Կ. — Տրոգի մատենիկներուն հայերէն բարգմանութեանը սիրալիր ընդունելութիւն գտնելը մեր ազգին մէջ, եւ ինչպէս ձեզմէ՝ նմանապէս ուրիշ բանասէրներէ ուրախացուիլն ենք ըլլալիք թէ պատճառ եղող Իշխանին եւ թէ բարգմանչին՝ գեղեցիկ նշան մըն է թէ որչափ յարգի են մերազնեաց առջեւն ալ չլմարիտ փիլիսոփայութեան եւ քրիստոնէական հաստատուն սկզբանց վրայ եղած լաւ գրութիւնները :

— Համաշխարհական Արուեստասանդիսին համար Փարիզ եկած պատուաւոր ազգայնոց վրայ քանի մը խօսք բռնելու միտք ունինք Օդոստոսի կամ Սեպտեմբերի ամսատետրակաց մէջ :

— Առ. Պ. Զ. Ի Պ. — Ամսագրոյս մէջ երկրագործական տեղեկութեանց քիչ ըլլալուն վրայ զանգատելու իրաւունք ունիք . բայց կրնաք վստահ ըլլալ եւ ձեր բարեկամները վստահացնել որ մեր աշխատութեանը այս օգտակարութիւնն ալ տալու մասնաւոր մտադրութիւն պիտի ընենք՝ մանաւանդ զայ տարի : Միայն թէ կրնաք ընդհանրապէս որ արեւելքի երկրագործութեան ինչ վիճակի մէջ գտնուիլը մանրամասն տեղեկութիւններով մեզի իմացընելու չզանգաղիք :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԱԼՏԷՐԻ :